

Պարտիայի և սովետական ժողովրդի
թշնամիները բազմիցս փորձել են ու-
սընձագուծյուն կատարել ժողովուրդնե-
րի բարեկամության դեմ: Միջազգա-
յին իմպերիալիզմի գործակալ Բերիան
և նրա բանդան փորձում էին բարոյա-
լքել մեր ռեսպուբլիկայի պարտիա-
կան կազմակերպությունը: Նրանք մեծ
վնաս հասցրին Հայաստանի Կոմու-
նիստական պարտիայի ղեկավար
կադրերին և հայ ժողովրդին: Սովե-
տական Միության Կոմտունիստական
պարտիայի Կենտրոնական Կոմիտեն
ժամանակին մերկացրեց ժողովրդի
թշնամի Բերիայի նողկալի շայկային:
Կենտրոնական Կոմիտեի անմիջական
ղեկավարությամբ և օգնությամբ ռես-
պուբլիկայում մեծ աշխատանք կա-
տարվեց պարտիայի և սովետական
ժողովրդի այդ արգահատելի թշնամու-
նողկալի գործունեության հետևանքնե-
րը վերացնելու ուղղությամբ: Այդ աշ-
խատանքը է՛լ ավելի ամրապնդեց
պարտիական կազմակերպության
շարքերը, բարձրացրեց նրա մարտու-
նակությունը: Թույլ տվեք համագու-
մարի ամբիտնից Հայաստանի Կոմու-
նիստական պարտիայի և հայ ժողո-
վրդի շնորհակալությունը հաղորդել
Սովետական Միության Կոմունիստա-
կան պարտիայի Կենտրոնական Կոմի-
տեին՝ հայ ժողովրդի նկատմամբ ցու-
ցաբերած լենինյան հոգատարության
համար: (Մափահարություններ):

Ընկերներ: Պարտիական կազմա-
կերպությունների կազմակերպչական
ու գաղափարական աշխատանքի թե-
րությունները, որոնք բացահայտված
են Ն. Ս. Խրուշչևի զեկուցման մեջ
լրիվ շափով վերաբերում են նաև
Հայաստանի պարտիական կազմակեր-